# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# Վ Ա Յ Ո Ց  Ձ Ո Ր Ի
# Մ Ա Ր Զ Պ Ե Տ

<< 10>> << Սեպտեմբերի >> 2019թ. N 89 ք. Եղեգնաձոր

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ <<ԱՂԱՎՆԱՁՈՐ ԱԱՊԿ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 5-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջներով.

**Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ  ԵՄ՝**

1. 2019 թվականի ներքին աուդիտի հաստատված ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի <<Աղավնաձոր ԱԱՊԿ>> ՊՈԱԿ-ում անցկացնել 2018 թ-ի բյուջետային տարվա գործունեության ֆինանսական աուդիտ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետներ Հասմիկ Ավետիսյանի և Հրաչ Քոչարյանի կողմից:
2. Խմբի աշխատանքներին մասնակից դարձնել վերոհիշյալ ՊՈԱԿ-ի տնօրենին և հաշվապահին:
3. Աուդիտի անցկացման ժամկետը սահմանել 7 աշխատանքային օր՝ աշխատանքները սկսել 2019 թվականի սեպտեմբերի 11-ին, ավարտել 2019 թվականի սեպտեմբերի 19-ին:

10.09.2019

X

ՏՐԴԱՏ ՍԱՐԳՍՅԱՆ

Подписано: SARGSYAN TRDAT 2901890687

**Տ. ՍԱՐԳՍՅԱՆ**